ՎԱՐԴՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՏԴ 821.19.0

ԾՈՎԻ, ՆԱՎԻ, ԼԵՌԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. Կոստան Զարյան, <<Անցորդը և իր ճամփան>>, <<Նավը լեռան վրա>>, <<Նավատոմար>>, ծովի խորհրդանշան, նավի խորհրդանշան, լեռան խորհրդանշան, Շառլ Բոդլեր, Արթյուր Ռեմբո, Ստեֆան Մալարմե, Վահան Թեքեյան, Հովհաննես Թումանյան, Զարեհ Խրախունի, Արա Հերյան, Մուշեղ Իշխան, , Լևոն Շանթ:

Ключевые слова и выражения: Костан Зарян, “Корабль на горе”, море, корабль, гора, Шарл Бодлер, Артюр Рембо, Стефан Маларме, Ваан Текеян, Ованнес Туманян, Заре Храхуни , Ара Ерян, Мушег Ишхан, Левон Шант.

Key words and expressions: Kostan Zaryan, ”The passer by and his wey”, ” The ship on a mountain”, the symbol of sea, the symbol of ship, the symbol of mountain, Sharl Bodler, Arthur Rembo, Stephan Malarme, Hovhannes Tumanyan, Zareh Xhraxhuni, Ara Heryan, Mushex Ishxan,Levon Shant.

Հայ գրականության պատմության մեջ նավի, ծովի, լեռան պատկերային կառույցների նախընտրությունը հաճախադեպ է: Մասնավորապես նավի, ծովի խորհրդանշանների իմաստային հեռապատկերը <<խաղարկվել>> է դեռևս մաշտոցյան շարականագրության, ինչպես նաև վաղ և ուշ միջնադարյան հոգևոր քնարերգության մեջ: Չմոռանանք, որ քրիստոնեական գրականության մեջ նավը և ծովը կրում էին հոգու և մարմնի <<անհաշտ մտերմության>> մեղքի և աստվածային ամենահաս փրկության պատկերային նույնահանգ գաղափարները՝ կառուցելով գեղարվեստական նշանառու համեմատություններ:

Հայ դասական գրականության մեջ նախընտրելի այս պատկերային կառույցների շարունակականության խորքով կամ ավանդույթը խորացնելու նպատատակադրմամբ չէ, որ սփյուռքահայ գրող Կոստան Զարյանը ծրագրային և ուղենշային իր երկերում (<<Անցորդը և իր ճամփան>>, <<Նավը լեռան վրա>>, <<Նավատոմար>> և ոչ միայն) էական նշանակություն տվեց նավերգությանն ու անհորիզոն ծովի պատկերին: Նա իմաստային և գաղափարական այս նշաններին դիմել է դեռ 20-րդ դարի 10 – 20 - ական թվականների ստեղծագործություններում՝ չթաքցնելով իր հիացում - կախարդանքը, պատկերային այդ համակարգի հանդիպադիր նախասիրությունը:

Կ. Զարյանի երկերում գեղարվեստական այս մտադրությները հետաքրքիր ու փիլիսոփայական մտապատկերներ են՝ դառնալով երբեմն գլխավոր թեմա, երբեմն գաղափար, կոմպոզիցիոն հյուսվածքն առաջ մղող ուժ, մտքի ուղղորդիչ:

Ծովը և նավը վիթխարի ազդեցություն ունեն Կ. Զարյանի ներաշխարհի վրա: Դրանք թաքնված են գրողի համակրանքի տիրույթում: Էպիկական հզոր շունչ ունեցող այս պատկերները անընդհատ հետապնդվում են նրա կողմից՝ ընդգծելով այն հարաճուն առաջնությունը, որ ունեն մեծ արվեստագետի գաղափարական-ստեղծագործական զինանոցում: Կարելի է ասել, որ Կ. Զարյանը և ծովն անտարանջատելի են և նույնական: Ծովը ներհյուսված է գրողի երազներին, բայց տեսլածին չէ: Այն անշրջանակ հայելի է՝ ներաշխարհը, հոգին արտացոլող ու ցուցնող՝ բոդլերյան հայտնի սկզբունքայնությամբ՝

Օ՜, ազատ մարդ, դու միշտ էլ սիրել ես ծովը անսահման,
Որ հայելին է քո ջինջ, դու զննում ես քո հոգին
Անդադրելի ծփանքում նրա փրփուր ալիքի,
Եվ քո միտքը ծովային խոր վիհերին է նման:[1]

Իսկ ավելի ստույգ՝ *<<Ամէն մարդ փնտռում է արտաքին առարկաների մէջ իր ներքին տեսիլքների համարժեքը>>*[2],- անվրեպ սահմանում է սփյուռքահայ գրողը իր հայտնի համայնավեպում:

Նմանապես նավը ապրում է Կ. Զարյանի հետ մարմնապես, իսկ դա նշանակում է, որ նավի էությունը զգալու համար ճիգ ու ջանք հարկավոր չեն, այն բնութենածին է, հիմնավորված գաղափարականություն՝ կայուն և կենսարար:

Տարբեր են պատկերի հնարավոր հեռագնա ենթիմաստները:

Նավի միևնույն ճարտարապետական ձևակառույցը տարբեր գրողների մոտ ձեռք է բերել զանազան ներթաքույց կամ ակնբախ ընդլայնվող ճանաչողության պատկերային սահմաններ: Ինչպես օրինակ Արթյուր Ռեմբոյի <<Գինովցած նավը>>՝ զարյանական ընկալմամբ՝ ողբերգական, ճակատագրական փոթորկումների խոր ակոսներում հայտնված, անհայտին խարսխված առեղծվածածին երևույթ, կամ Ստեֆան

[1] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, Երևան, 1990, էջ 28:
[2] Կոստան Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, Երևան, 2010, էջ 94:

Մալարմեի շոգենավը՝ մեր ընկալմամբ՝ ձանձրույթից փախչող, ազատության ճիգը որոնող արկածախնդիր:

Կ. Զարյանի համար նավը *<<ճարտարապետական ձևի տրամաբանական արտայայտութիւն է: Կեանք: Գեղեցիկ կեանք: Կայմից մինչեւ խարիսխ, բնական եւ անհրաժեշտ: Յաւիտենականութիւն: Կայունը անկայունի դէմ: Հաստատուն կամքը՝ միրճւած տարերայինի սրտին: Եսը՝ ալեկոծումի մէջ>>*[3]:

Կ. Զարյանը սիրում է շարժումը, և նավը դառնում է շարժվելու նախընտրելի ձև, իմացական եղանակ՝ երևակելու սեփական էության դարսդարսված ծալքերը, մղվելու ինքնության ճանաչողության:

Կ. Զարյանի համար նավը կուլտուրապես ապրող ժամանակակից հասարակությունից անբաժանելի է, *<<հոգեկան աւանդութիւնների հսկայ համադրութիւն>>*[4]: Նավը, այսինքն՝ կուլտուրան, հակադրում է քաղաքակրթությանը՝ ալեկոծված ծովին, որը վախի մակընթացություն է: Նա, կանգնած համաշխարհային մշակույթի բարձր պարիսպների վրա, տեսնում է քաղաքական այն դեղևուն վիճակը, որը բնութագրելի է շատ ու շատ երկրների համար: Աչքի առաջ ունենալով նավի հոգեշահ պատկերը՝ գրողը վստահաբար հայտնում է, որ *<<կան երկրներ, որոնք աւելի անկայուն են, քան նաւը, աւելի շարժուն եւ հոսողութեան ենթարկւող: Կան դիմազուրկ երկիրներ, որոնք բխած են ալիքներից, մինչ նաւը կղզի է, եւ իր իդեալական ձեւի մէջ, տեւականութիւն>>*[5]:

Զարյանական այս պատկերավոր անկեղծությունը ուղղված է արևմտյան քաղաքական և կրոնական <<բարոյականության>>, կեղծ մարդասիրությամբ տառապող նյութակենտրոն և կույր հասարակության դեմ, որը հեշտորեն ենթարկվում է տեղատվության և մակընթացության անհաստատ վիճակներին՝ ի շահ իրեն և եսակենտրոն նկրտումների:

Կ. Զարյանի գեղագիտական ընդհանրացումների մեջ հետաքրքիր է նաև նավի և եկեղեցու՝ որպես աստվածային անաղարտության, խաղաղության հարաբերակցությունը: *<<Եկեղեցիներում այն վայրը, ուր մարդկութեան ողբերգութիւնն է տեղի ունենում, անւանում են նաւ>>*[6],- մահվան առեղծվածային դարձդարձումների և խոհակալած կյանքի տրամաբանական առնչության մեկնակետից նկատում է Կ. Զարյանը: Եկեղեցու <<նավը>> իմաստնության խորհրդով դառնում է մահացած

[3] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 95:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

մարմինը հանգչեցնող կարճատև հանգրվանը, հավերժական նավարկումից առաջ հոգին խաղաղեցնող նավահանգիստը, աստվածայինի անթաքույց <<ներկայությամբ>> հոգու աննյութ, բայց տիրական դերի հավասարկշռողը՝ հիշեցնելով մեծ բանաստեղծի՝ Վահան Թեքեյանի՝ օրհներգության պես հնչող <<Եկեղեցին հայկական>> քերթվածի չերկրորդված տողերը՝

> *<<Եկեղեցին հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ*
> *Նաւահանգիստ մ'է խաղաղ, ցուրտ գիշերին հո՛ւր եւ բոց....>>*[7]:

<<Եկեղեցի եւ նաւը նոյնանման են, որովհետեւ աստուածային բնոյթն են բնորոշում>>[8],- ճշտում է նույն այդ աստվածային հովանու հաճախանքը զգացող գրողը՝ Վ. Թեքեյանից ոչ պակաս հոգեզգաց և հոգեխույզ Կ. Զարյանը, ապա դառնալով նեղոսյան նավարկումների արգասիք եգիպտական մշակույթի, Եփրատի *<<հոգեկան փթթումների>>,* անտիկ հունական մշակույթի նավածին և ծովածին բնույթին և էությանը՝ կրկին ու կրկին կարևորում իր և մեզ համար շահեկան պատկերների հզոր ներունակությունը:

Կ. Զարյանը իր համայնավեպում շարունակում է զգալ նավի և ծովի առթած սքանչացումի սարսուռը, որը բանաստեղծություն է, քերթված, հիացիկ զգացումի հաճախանք. *<<Նա՛ւը, նա՛ւը... Լաւ գրուած պօէմա: Համաչափ իր բոլոր մասերում: Կշիռք: Իդէալ կազմակերպութիւն, միտք, թռիչք, շարժուն կենսունակութիւն, աստղերի խորհրդաւոր օրէնքներով ղեկաւորուած: Զգայուն, վերին աստիճանի՝ բանաստեղծի պէս>>*[9]:

Նավը սփյուռքահայ գրողի ամենամեծ մխիթարությունն է, լինելիության խորհուրդը: Իսկ ահա Կ. Զարյանին զուգադիր բողլերյան արվեստագետի կյանքը անամոք գոյություն է, *<<տենչանքի ահագնությունից>>* իր <<ես>>ը արագորեն կորցնող, թեև նրա համար ևս կարևոր է ծովի գերզգայությունը և խռովիչ ու տառապագին՝ ծովի անզգայությունն ու տեսարանի անշարժությունը:

Բնապատկերի նույն շարունակական տեսողությամբ դառնալով իրեն ընտանի ու հարազատ ծովի խորհրդապատկերին՝ Կ. Զարյանը կատարում է նուրբ ու նոր դիտարկում. *<<Ծովի հետ ունեցած իր յարաբերութիւնից*

---

[7] Վահան Թէքէեան, Գաղտնի պարտէզ, Պէյրութ, Երեւան, 2003, էջ176:
[8] Նույն տեղում:
[9] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 96:

կարելի է բնորոշել մարդը: Կարելի է բնորոշել ժողովրդները>>[10]՝ եզրակացնելով, որ *<<մենք՝ հայերս, կուլտուրապէս, ծովի եւ լեռան երկու հակադիր սկզբունքների պայքարով ենք ապրել:*

Լեռնային մարդը անհորիզոն է եւ սահմանափակ: Լեռը ստրուկօրէն ներկան է, ինքնապաշտպանութիւն եւ սահման: Այստեղ երկինքը ամպ է, մշուշ եւ իր պայծառութիւնը ոչ մի բանի մէջ չի արտացոլւում: Լեռը ծանրութիւն է, բարձրացողի ծունկերի վրայ կախուած քար, ճնշում: Մռայլ է եւ գրեթէ անփոփոխ: Մենակութիւն է:

Եթէ լեռնային մարդը անասունների տրտում ընկերակցութիւնը չունենայ՝ կը մեռնի>>[11]*:*

Կ. Զարյանը լեռան գեղարվեստական այլասացության մեջ չի տեսնում գոյատևում, նպատակ կամ նոր այգաբաց, այլ շրջում է պատկերի ճանաչողության մեզ հայտնի ընթացքը (Հովհ. Թումանյան, Զ. Խրախունի)՝ գտնելով, որ *<<մենք՝ մենք կորցրել ենք տիեզերական բնազդը, երաժշտական իմաստը եւ բարձրացել ժայռերի գագաթը>>*[12], այնինչ *<<ծովը լայն երգի մեղեդի է, հոսանք, թռիչք եւ ապագայ: Բաց ճանապարհ է եւ աղմկալից կենսունակութիւն: Ծովափերին օրը թրթռում է եւ կանայք սիրել են ուզում: Ծովը բոլոր կարելիութիւնների բանալին է եւ ցանկութիւնները վառող ջահակիրը>>*[13]*:* Ծովի և լեռան հակադրության նույնանման ընկալման հանդիպում ենք նաև <<Նավը լեռան վրա>> վեպում՝ աստիճանաբար իրապաշտ հարցադրումների մեջ խորացող Արա Հերյանի մտորումներում. *<<Ծովը տարբեր է լեռներից: Ծովը անհանգիստ էր և փոփոխվող ճանապարհ էր, բաց, լայն, արկածներով լցված: Օրորվող հորիզոններ, անակնկալներ, զգայնության նորանոր գրգիռներ մատուցող շքեղություններով լցված: Ծովը մեծդի սեռականություն էր, մարմնի անհագ ծարավ>>*[14]*:* Ու եթե սարոյանական ներաշխարհի ընկալմամբ *<< մեր սիրտը միշտ լեռներում է>>*, *<<հիշողության ու ծննդավայրի ձգողական բարձունքներում*[15]>>,- ինչպես դիմագծում է գրականագետ Սուրեն Դանիելյանը, ապա մյուս տարագիր գրողը՝ Կ. Զարյանը, կարծում է, որ դա է պատճառը, որ մենք չենք ունեցել ապրելու այն հրայրքը, որը, ավելի քան պակասել է մեզ: Հրայրքը ծովածին է, իսկ *<<մեր նախնիքները ծովերը*

---

[10] Նույն տեղում:
[11] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 97:
[12] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 113:
[13] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 97:
[14] Կ. Զարյան, Նավը լեռան վրա, Երևան, 1985, էջ 442:
[15] Սուրէն Դանիէլեան, Միջուկի տրոհումը, Գիրք Ա, Երեւան, 2011, էջ267:

եզերող լեռների վրայ կանգ են առել, խրխնջացող ձիերի վրայ բազմած, առանց առաջանալու>>[16]*:* Ահա սա է, ըստ Կ. Զարյանի, մեր պատմության դրամատիկ ու աղեխարշ լինելու պատճառներից մեկը: Ու քանի որ մեզ մոտ ազգային երազի ու սթափություն <<ճչացող>> պատմության նժարները միշտ վեր ու վար են, այդ է պատճառը, որ մենք շարունակում ենք աներազ հոգիով ապրել այն նույն իրականության մեջ, ուր *<<Արարատը գեղեցիկ է, հայոց աշխարհը՝ դժբախտ>>*[17]*:* Այստեղ չենք կարող չտեսնել ազդեցության այն անկյունաքարը, որը ուղենշում է Կ. Զարյան - Մ. Իշխան գաղափարական, պատկերային ընդհանրությունը ազգայինի և աներազ հոգու հարաբերակցության ծիրի մեջ՝ հետևյալ մասնավորմամբ. Մուշեղ Իշխանի <<Հոգին աներազ>> բանաստեղծության հայտնի տողերը՝

Հոգին աներազ
Հովերուն դիմաց
Կայմաբեկ նավեն
Առկախ առագաստ…[18]

հաստատում են օտար երկնքի տակ հայտնված սփյուռքահայի աներազ հոգու գոյության փաստը, այն տխուր օրինաչափությունը, որ Սփյուռքի նավը գնում է դեպի ծանծաղուտ, դեպի Լուսավորչի յուղասպառ կանթեղ: Կ. Զարյանի պատկերային ընկալումը, ազգային հետաքրքրությունների շփման սահմանը ավելի լայն է. նա ողջ հայության կյանքը համեմատում է անցյալի մշտնջենական ալիքի կատարին ցցված, առագաստը պատռված նավակի հետ, և մեր *<< դաշտ ու լեռ՝ ինչպէս ահա Արարատը՝ ման են գալիս անստոյգ հորիզոնի վրայ>>*[19]*:*

Քննաբանելով, մեկնելով փախստականի մտայնությամբ ապրող մեր ժողովրդի վիճակը՝ Կ. Զարյանը պատկերային նույն նշանառությամբ՝ ծովի կառուցիկ պատկերի շահեկան ծավալումներով, մատնանշում է մեր տեղը համաշխարհային ընկղմող, <<գելխեղդ>> քաղաքակրթության <<նավահանգստում>>, ուր մենք, ոչ ավել, ոչ պակաս, *<<խեղճ նաւակ ենք, աննշմարելի եւ գրեթէ անյայտ>>*[20]*:* Սա է համամարդկայինի բարձունքից

[16] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 97:
[17] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 172:
[18] Մուշեղ Իշխան, Երկեր, Երևան, էջ 110:
[19] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 273:
[20] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 172:

նայող խորազգաց գրողի ահազանգ-խոսքը, ամենատեսությունն ու ներքին ցավը:

Աշխարհը շարունակում է դիմակափոխվել՝ որդեգրած բարոյական նոր հետաքրքրություններ: Արդի մեծ աշխարհը, ըստ Կ. Զարյանի, ավելի անկայուն է, ոչ մշտակա, քան ալեկոծված ծովի ալիքները: Ծովի հիանալի բնագդական ներգործությունը, փոթորիկների դրաման տեղի է ունենում տիեզերական հաստատուն **բարոյական** (ընդգծումը մերն է - իմա՝ Վ. Դ.) օրենքների մղումով՝ բնության բացատրելի պատճառականությամբ, որը արդյունարար ու անհրաժեշտ է երկրագնդի հավասարակշռության համար: Այլ բան է, թե որքանով է կարողանում արդի մարդը դիմակայել մոլեգնած ու տարերայնոտ ծովի վերուվարումներին. հմուտ նավավա՞ր է, թե՞ հանդուգն արկածախնդիր: <<*Արդի մարդը, բազմաթիվ հակասություններով բոլորված, նման է փոթորկային ծովը ինկած նավարկողին, որ կատարյալ գործիքներով ի վիճակի է չափել տարերքի թափը, խորքը և ուղղությունը, բայց անկարող է իր ուժերի վրա տիրող հզոր այդ անշղթայությունը զսպել, ենթարկել իր ներքին հավասարակշռության*>>[21],- աշխարհի մարդու կեցությունն է ծանրակշռում է Կ. Զարյանը <<Նավատոմար>> էսսեում: Այնինչ մեր պատմությունը ճախարակի պես անբնազդ ու անկիրք շարունակում է պտտվել իր ճակատագրի՝ նույն ծանրագույն առանցքի շուրջ՝ կորցրած ծովի խորությունը՝ նույնահանգ ու անփոփոխ ռիթմով:

Ցավոք, մեր <<նավը միշտ լեռան վրա>> է եղել, այսինքն՝ անհեռանկար, սահմանափակ, անշարժ և լքավեր: Իր հայտնի վեպում (<<Նավը լեռան վրա>>- իմա՝ Վ. Դ.) ծովի և լեռան սուր հակադրությամբ Կ. Զարյանը առաջ է քաշում կրոնապայքարի՝ մեզ վաղուց ծանոթ տրամադրություններ: Դա դեռևս 20-րդ դարի 10-ական թվականներին հունավորված <<հեթանոսական>> շարժման հերթական արձագանքն էր: Լեռը խորհրդանշում է քրիստոնեությունը: Մեր նավը քրիստոնեության երկնահաս, բայց բևեռացած, մեկուսի լեռնագագաթին է, ծովից բազմամղոն հեռու, որովհետև ինչպես վեպում աշուղն է ասում, <<*...ծովը սուրբ չի, սուրբ հոգին էնտեղ բնակություն չի կարող ճարել... Ծովի ձեները հակառակ են Ավետարանին, նրանք լեցուն են բարկությունով...*>>[22]: Ու մեր նախնիները հասել են բարձրություններին, բայց դեպի ծով չեն իջել, որովհետև լավ են ըմբռնել ծովի հեթանոս անհնազանդությունը: Կ. Զարյանը կարիք է զգում կրոնների հակադրության, իսկ դա անհրաժեշտ միտումի թելադրությունից է: Հիշենք Լևոն Շանթի <<Հին աստվածներում>> ինչպես է նոր կյանքի և նոր

[21] Կ. Զարեան, Նաւատոմար, Երեւան, 1999, էջ 54:
[22] Կ. Զարյան, Նավը լեռան վրա, էջ 333:

էության փնտրտուքի մեջ վերացած Աբեղան նետվում դեպի ծովը՝ ձուլվելու լույսին և ջերմությանը, Աստղիկին, Վահագնին ու մյուս աստվածներին: Սա ոչ միայն ծովի հեթանոս էության նույնահանգ ըմբռնում է, այլ նաև կաղապարող, թռիչքը փշրող <<սխալ քրիստոնեության>> նպատակային քննադատություն: Սակայն միաժամանակ Կ. Զարյանի խոսքի մեջ սոսկ կրոնական հակամարտություն տեսնելը պարզունակ կլինի: Նա մտահոգ է մեր կորցրած պատմամշակութային արժեքների համար, ազգայինի պակասի համար, հայկական գործոնի տկարության համար: *<<Երբ հայը լքում է լեռները,- զայրույթով նկատում է Արա Հերյանը,- նսեմանում է, փոքրանում, բարոյալքվում... Դառնում է ուրիշ, դատարկվում է ինչ-որ գաղտնիքից, մի ինչ-որ խորհրդից... Թող թվով լինենք քիչ, այդ կարևորություն չունի, բայց լինենք ամբողջովին այն, ինչ իսկապես ենք...>>*[23]: Կ. Զարյանը ընդդիմանում է ուրիշի փորձառությունները ընդօրինակելու, հարմարվելու, տաշվելու, որբանալու անգաղափար տրամաբանության դեմ: Վերջապես, երբ ժողովուրդը կորցնում է ազգայինը, սեփականը, հայկականը, սկսում է ապրել կյանքի մակերեսի վրա:

Կ. Զարյանի պատկերային, գաղափարական զինանոցում լեռը կաղապար չէ: Այն իր անվերապահ մեծությամբ ինքնության խորհուրդը ունի: Լեռը պատասխանատվություն է, հայի խիղճը, նրա էության ու ինքնության բաղադրիչը: Փույթ չէ, որ մեր նախնիները լեռը նախընտրել են ծովից, միևնույն է, ըստ Կ. Զարյանի, *<<մեր երկրում նաւարկելու համար լեռ պետք է բարձրանալ: Մեր ծովերը երկնքի մօտ են>>*[24],- գրում է Կ .Զարյանը <<Անցորդը և իր ճամփան>> համայնավեպում, ապա <<Նավատոմար>>ում մեկնում իր խոսքի սլաքի ուղղությունը. *<<Մեզ վիճակված է ապրել բարձրավանդակի վրա: Մեր դաշտերը և մեր լճերը մագլցում են դեպի լեռը: Վայ մեզ, եթե վար իջնենք, կընկնենք արդի քաղաքակրթության ծխնելույզի տակ, մեքենայի մաս կդառնանք կամ խանութպան>>*[25]: Լեռը, ըստ Կ. Զարյանի, մշակույթի, հոգևոր թռիչքի մեկնակետն է, ճշմարիտ արվեստի պահպանման բարձրագույն ավազանը: Այնտեղից դեպի վար՝ գահավեժ անկումն է, ազգային-մշակութային լինելիության կորուստը, սեփական դիմագծի աղճատումն ու այլափոխումը:

Լեռան անհեղլի պատկերի և նավի, ծովի մշտաձև շարժանկարի արծարծումը սփյուռքահայ գրողի կողմից մեր ժողովրդի անցելասույզ պատմության ընդջրյա խութերը լուսավորելու, մեր սխալներին ու

[23] Կ. Զարյան, Նավը լեռան վրա, էջ 269:
[24] Կ. Զարեան, Անցորդը եւ իր ճամբան, էջ 427:
[25] Կ. Զարեան, Նաւատոմար, էջ 89:

սայթաքումներին ոչ թե նյարդային, այլ անքույթ, խաղաղ սթափությամբ մոտենալու, դրանք սրբագրելու նպատակադրումն ունի: Գրողի՝ երբեմն իրարահաջորդ, երբեմն հակընդդեմ ու իրարամերժ տեսակետերը բխում են մտածումների հորդանքից: Կ. Զարյանի մտքերի հաճախանքը ծովածավալ է, մշտակա և անհանգիստ: Նա շարունակում է հիացնել ու զարմացնել իրեն հավատարիմ ընթերցողին և զայրացնել նրանց, ում հոգուն անհաղորդ են հանճարեղ սփյուռքահայի խոսքերի սլացքն ու դրանց նշանառությունը:

Վ. Դավթյան

Ծովի, նավի, լեռան խորհրդանշական պատկերները Կոստան Զարյանի երկերում

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է սփյուռքահայ գրող Կոստան Զարյանի եկերում ծովի, նավի, լեռան պատկերային կառույցների իմաստային շերտերը: Ծովը, նավը և լեռը վիթխարի ազդեցություն ունեն Կ. Զարյանի ներաշխարհի վրա: Կառուցիկ այս պատկերների շահեկան ծավալումների մատնանշմամբ քննաբանվում են սփյուռքահայ հեղինակին հետաքրքրող և հուզող ազգային և համամարդկային հարցեր, փորձ է արվում բացել խորհրդանշանների հնարավոր հեռազնա ենթիմաստները:

В. ДАВТЯН

Символическое изображение моря, корабля, горы в работах Костана Заряна

Резюме

В производениях К. Заряна море, корабль, гора интересние и философские символы, которые иногда становятся идеей и толкают в перед композицию. Можно сказать, что К. Зарян и море неразлучии. К. Зарян любит движение и корабль становится для него предпочитаемым средством движения. Он считает, что корабль необходим в современном культурном обществе. К сожелению наш корабль всегда был на горе, не имеющим будущее, безлимитный и нокинутый. К. Зарян в своем произведении "Корабль на горе" выдвигает контраст между кораблем и горой. Гора с точки зрения К. Заряна начало культуры и духовного полета. Гора это совесть армян, их сущность. Отсюда спад, потеря и искожение собственного отращжения.

Символы гора, корабль и и море помогает писателю подходить к нашим ошибкам снисходительно.

V. DAVTYAN

Symbolic images of sea, ship and mountain in works by Kostan Zaryan

Summary

Sea, ship and mountain are interesting and philosophical symbolos, which sometimes become a crucial theme, sometimes idea, enforcing power of compuliton. We may say that sea and K. Zaryan are inseperable from each other. Paralelly ship lives with him bodily. K. Zaryan likes movement, ship becomes a preferable way of movement, he supposes that ship is the only culturally inseperable thing from modern society. Unfortunately, our "ship has always been on a mountain thus, non-perspective, limited abandoned and fixed. K.Zaryan in a novel "Ship on a mountain" puts forward the contradiction between ship and sea. Mountain is a sin of Armenian, it's essence. Mountain due to K. Zaryan culture is the point of spiritual flight. Coming down from there we have a collapse, loss, the conceptuation of personal feature.

The symbolos of sea, ship and mountain help the author to come across quietely.